ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Մարիամ Մասիսի Հարությունյանի «Բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Բնակչության կյանքի որակի ուսումնասիրությունը համարվում է սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային հիմնահարցերից մեկը: Արդի փուլում բնակչության կյանքի որակի բարձրացման հիմնախնդիրները գտնվում են գիտնականների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Ներկայումս պետությունների զարգացման մակարդակի գնահատման համար միայն ՀՆԱ-ով կամ տնտեսական աճի տեմպերով չեն առաջնորդվում. առաջնային կարևորություն են ստացել այնպիսի ցուցանիշներ, որոնք արտահայտում են մարդու բարեկեցության իրական դրսևորումը, առողջապահական ու կրթական հնարավորությունները, սոցիալական ապահովվածությունը և այլն: ՀՆԱ-ի շարունակական աճի հարցը ներկայումս համարվում է անհրաժեշտ, բայց ոչ ամենաառանցքայինը: Հետինդուստրիալ հասարակությունում տնտեսական աճի անհրաժեշտությունը բացատրվում է տնտեսական առաջընթացի ապահովման տեսանկյունից, սակայն այն բավարար չէ սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բազմաթիվ երկրներում տնտեսական աճի բարձր տեմպերը չեն նպաստում կյանքի որակի մակարդակի բարձրացմանը, աղքատության կրճատմանը, այլ ընդհակառակը՝ նկատվում է աղքատության խորացման միտումներ: Իրականում պատկերը հետևյալն է, որ սոցիալ-տնտեսական զարգացման առումով առաջատարներ են ոչ թե տնտեսական աճի բարձր տեմպեր ունեցող երկրները, այլ նրանք, որոնք ունեն կրթության, գիտության, առողջապահության և մշակույթի զարգացվածության բարձր մակարդակ: ՀՀ-ում կյանքի որակի և այլ երկրների շարքում դիրքերի բարելավման համար, հաշվի առնելով երկրի տնտեսական, սոցիալական և մշակութային առանձնահատկությունները և միջազգային ասպարեզում ձևավորված գնահատականները, անհրաժեշտ է կյանքի

որակի կառավարման համակարգերի ուսումնասիրություն և նոր կառուցակարգերի մշակում և տեղայնացում:

Վերոնշյալ դրույթները հիմնավորում են կյանքի որակի դերի և ազդեցության բացահայտման անհրաժեշտությունը և հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ բնակչության կյանքի որակի կառավարման գործընթացում առկա հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը: Ատենախոսության շրջանակում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել կյանքի որակի տեսական սկզբունքները և մեթոդաբանական հիմքերը,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում բնակչության կյանքի որակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշները և դրանց դինամիկան, բացահայտել դրանց կարգավորման հնարավոր եղանակները,
- ուսումնասիրել և համեմատական վերլուծության ենթարկել կյանքի որակի գնահատման միջազգային չափանիշներն ու բազմաբնույթ մոտեցումները,
- բացահայտել եկամուտների բաշխման և բնակչության սոցիալական շերտավորման կառուցվածքային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, ներկայացնել՝ կարգավորման կառուցակարգերը,
- բացահայտել կյանքի որակի վրա սոցիալ-տնտեսական փոփոխությունները պայմանավորող գործոնները բազմաչափ վերլուծության միջոցով՝ վեր հանելով կառավարման ենթակա առկա հիմնախնդիրները,
- մշակել կյանքի որակի գնահատման նոր մոդել՝ համաթվի կառուցման միջոցով,
- գնահատել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորող գործոնների ազդեցությունը բնակչության կյանքի որակի վրա,
- մշակել քաղաքականություն իրականացնողներին ուղղված՝ ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավման հիմնական ուղիներ, և պետական կարգավորման կառուցակարգեր:

Հետազոտության օբյեկտը եվ առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ բնակչության կյանքի որակի ձևավորման և կառավարման գործընթացն է, իսկ առարկան՝ ՀՀ բնակչության կյանքի որակի վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոնների փոխազդեցության կառուցակարգերը:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակում կատարված վերլուծությունների հիմնական գիտական արդյունքներն արտացոլվել են հետևյալ գիտական նորույթներում.

1. Մշակվել է գնաճի մակարդակի վերահսկման և պատասխանատվության համատեղ կառավարման մոդել՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված գնաճի և փաստացի մակարդակների համեմատության արդյունքում արձանագրված զգալի շեղումներից, որի դեպքում նախատեսվել է պատասխանատվություն այն անձանց նկատմամբ, ովքեր նպաստել են այս հիմնախնդրի առաջացմանը:
2. Ռեգրեսիոն վերլուծության միջոցով կառուցվել է մոդել՝ կանխատեսելու ՀՀ ՀՆԱ-ի աճի տեմպը՝ ռուս-ուկրաինական պատերազմի ՀՀ տնտեսության վրա 2022 թ.-ից հետո ունեցած դրական շոկերի բացակայության պայմաններում:
3. Կլաստերային վերլուծության միջոցով խմբավորված քաղաքներում բացահայտվել են դրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների սպառման ու գնային ինդեքսների տարբերություններով, որպես կառավարման կառուցակարգ դիտարկվել է տարբերակված մոտեցում տարածքային զարգացման քաղաքականության մեջ՝ ուղղված ցածր գնային կլաստերում ընդգրկված քաղաքներում աշխատատեղերի ստեղծման և տնտեսական ակտիվության բարձրացման անհրաժեշտությանը:
4. մշակվել է կյանքի որակի գնահատման համաթիվ, հիմնված 3 ոլորտներից ընտրված 24 ցուցանիշների հիման վրա՝ միավորելով միջազգային մասշտաբով և ՀՀ-ում առավել հաճախ օգտագործվող տարբեր մեթոդաբանական մոտեցումները: Համաթիվը կարող է օգտագործվել ինչպես ՀՀ, այնպես էլ

ուսումնասիրված 100 երկրների բնակչության կյանքի որակի գնահատման համար (կշիռների փոփոխման պարագայում):

Ատենախոսության հիմնական բովանդակությունը: Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթները, ստացված հիմնական արդյունքների տեսական և գիտագործնական նշանակությունը, հրապարակումները, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Կյանքի որակը որպես սոցիալ-տնտեսական կատեգորիա»** գլխում իրականացվել են կյանքի որակի հիմնական բնութագրիչների, և մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրություն, ինչպես նաև ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում բնակչության կյանքի որակը բնութագրող սոցիալ-տնտեսական չափորոշիչների դինամիկան՝ առաջարկվել կարգավորման մոտեցումներ: Ատենախոսը միջազգային չափանիշների համատեքստում անդրադարձել է կյանքի որակի գնահատման մոտեցումներին և համեմատական վերլուծությանը: Այս գլուխը ընդհանրացվել է ներկայացնելով միջին խավի ձևավորման կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետությունում եկամուտների բաշխման և բնակչության սոցիալական շերտավորման կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրմամբ:

Երկրորդ՝ **«Բնակչության կյանքի որակի վերլուծությունը և գնահատումը սոցիալ-տնտեսական գործոնների և ցուցանիշների հիման վրա»** գլխում ուսումնասիրվել և վերլուծվել են կյանքի որակի վրա ազդող գործոնները, բացահայտվել են կյանքի որակի վրա սոցիալ-տնտեսական փոփոխությունները պայմանավորող գործոնները բազմաչափ կլաստերային վերլուծության միջոցով՝ գնահատելով և վեր հանելով առկա խնդիրները: Ներկայացվել է նաև գնաճի ծրագրով նախատեսված և փաստացի մակարդակների զգալի շեղումները, հաշվակվել հասարակության կրած վնասի մեծությունը՝ առաջարկելով ներդնել պատասխանատվության համակարգ:

Երրորդ՝ **«Բնակչության կյանքի որակի գնահատման և կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում»** գլխում ատենախոսն առաջարկել է կյանքի որակի գնահատման համաթիվ, հիմնված 3 ոլորտներից ընտրված 24 ցուցանիշների վրա՝ միավորելով միջազգային մեթոդաբանությունների և ազգային վիճակագրական տվյալների համադրությունը: Համաթիվը կարող է օգտագործվել ինչպես ՀՀ, այնպես էլ ուսումնասիրված 100 երկրների բնակչության կյանքի որակի գնահատման համար:

Ատենախոսության վերջում՝ «Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության գլուխների հիմնական արդյունքները և ներկայացվել համապատասխան առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներից և առանցքային գաղափարներից մեկը նվազագույն աշխատավարձի բարձրացումն է՝ այն դիտարկելով որպես աղքատության կրճատման և միջին խավի վերարտադրության ապահովման գործիք: Սակայն, պետք է նշել, որ նվազագույն աշխատավարձի բարձրացման վերաբերյալ ատենախոսությունում բերված դրույթներն առավելապես արտահայտում են քաղաքականության ընդհանուր ուղղություն կամ ցանկալի արդյունք, քան գիտականորեն հիմնավորված առաջարկություն: Եթե առաջարկվում է բարձրացնել նվազագույն աշխատավարձը, նպատակահարմար կլիներ հիմնավորել դրա առաջարկվող չափը կամ հաշվարկման կառուցակարգը, գնահատել տնտեսության արտադրողականության, աշխատաշուկայի, գործատուների ծախսերի, պետական բյուջեի, գնաճի և սոցիալական անհավասարության վրա հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև ներկայացնել տարբեր սցենարների համեմատական վերլուծություն: Նման քանակական գնահատականների և ռիսկերի վերլուծության առկայությունը զգալիորեն կուժեղացներ առաջարկության գիտական և կիրառական հիմնավորվածությունը:
2. Ատենախոսության 1-ին գիտական նորույթն իր բնույթով և բովանդակությամբ առավել բնորոշ է իրավագիտության բնագավառին, ոչ

թե տնտեսագիտական.ըստ ձևակերպման՝ ստացվում է, որ գնաճի շեղումը կարող է պայմանավորված լինել կոնկրետ մարդկանցով, ովքեր, եթե նպաստում են դրան, ապա պետք է պատասխանատվություն կրեն, մինչդեռ հանրահայտ է, որ գնաճը բարդ և բազմագործոն երևույթ է, ոչ թե ինչ որ անձանցից կախված երևույթ, իսկ մարդկանց պատասխանատվության ենթարկելու ինստիտուտն, անշուշտ իրավագիտության դաշտում է: Հետևաբար, նշված դրույթն անհիմն է և չի կարող հանդիսանալ սույն թեմայով ատենախոսության գիտական նորույթներից մեկը: Տվյալ նորույթի վերաբերյալ ատենախոսությունում բերված բազմաթիվ դրույթներ, նույնպես վիճելի են, ինչպես նաև անհասկանալի, մասնավորապես նշվում է, որ «Կենտրոնական բանկը տվյալ դեպքում Ազգային ժողով է ներկայացնում պաշտոնական պատասխանատվության վերաբերյալ հաշվետվություն», ինչպես նաև նշվում է, որ «տվյալ գիտական նորույթն արտացոլում և հիմնավորում է դրամավարկային կայունությունից անցումը սոցիալական կայունություն», սակայն թե ինչպե՞ս, ի՞նչ կառուցակարգերով, ի՞նչ ասել է պաշտոնական պատասխանատվության վերաբերյալ հաշվետվություն՝ դարձյալ հասկանալի չէ: Ընդորում, նշվում է, որ պատասխանատվության վերաբերյալ հաշվետվությունը իր մեջ պետք է ներառի կյանքի որակը բնութագրող ցուցանիշների վրա ունեցած ազդեցության վերլուծություն, մինչդեռ հարկ է նշել, որ դա բացարձակապես չի հանդիսանում ՀՀ Կենտրոնական բանկի խնդիրը:

3. 4-րդ գիտական նորույթի շրջանակում նշվում է, որ մշակվել է կյանքի որակի գնահատման համաթիվ, հիմնված 3 ոլորտներից ընտրված 24 ցուցանիշների հիման վրա՝ միավորելով միջազգային մասշտաբով և ՀՀ-ում առավել հաճախ օգտագործվող տարբեր մեթոդաբանական մոտեցումները: Սակայն պետք է նշել, որ ներկայացված 24 ցուցանիշների ընտրությունն ու համաթվի մեջ ներառումը բավարար հիմնավորված չէ, մասնավորապես ցանկալի կլիներ, որպեսզի հիմնավորվեր, թե ինչու են համաթվի մեջ ներառվել հիմնական կապիտալի մասնաբաժինը համախառն թողարկման կառուցվածքում, գլոբալ նորարարական համաթիվը, բնական

ռեսուրսներից ստացված ընդհանուր վարձավճարները, բացի այդ՝ ինչու չեն ներառվել կյանքի որակի վրա ազդող այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են աղքատության մակարդակը, տնտեսապես ակտիվ բնակչության մասնաբաժինը, կրթական մակարդակի կառուցվածքը, քաղաքային և գյուղական բնակչության մասնաբաժինը, ինչպես նաև երկրի անվտանգային, քաղաքական կայունության և այլ ուղղություններն արտացոլող ցուցանիշները:

4. Առաջադրված խնդիրները հիմնականում արտացոլվել են ատենախոսության կառուցվածքում ներառված ենթագլուխներում, սակայն 8-րդ խնդիրը, որը չափազանց կարևոր է իր նշանակությամբ և ենթադրաբար պետք է հանդիսանար ատենախոսության հիմնական արդյունքներից մեկը՝ կառուցվածքում արտացոլված չէ: Բացի այդ՝ ատենախոսությունում այդպես էլ հստակ չի ձևակերպված, թե, ի վերջո, որո՞նք են այն հիմնական ուղիները և պետական կարգավորման կառուցակարգերը, որոնք էականորեն ապահովելու են ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավումը: Այսպիսով, հաշվի առնելով տվյալ խնդրի առանցքային կարևորությունը, ցանկալի կլիներ, որպեսզի այն ներկայացվեր առանձին ենթագլխով, ինչպես նաև գիտական նորույթներից մեկն արտացոլեր տվյալ խնդիրների լուծումը, քանի որ գիտական նորույթներից ոչ մեկում ըստ էության չի արտացոլվում ինչպես ՀՀ բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրների բացահայտման, այնպես էլ դրանց լուծման կառուցակարգերին վերաբերող դրույթներ:

5. Ատենախոսության էջ 97-98-ում նշվում է. «Հետազոտության հիմնական նպատակն է պարզել, թե ինչպիսի իրավիճակում կհայտնվի Հայաստանի Հանրապետությունը ռուս-ուկրաինական պատերազմի ավարտից հետո, ինչ կլինի այդ դրական շոկի դուրս գալուց որոշ ժամանակ անց: Իրավիճակի վերլուծության և գնահատման համար մշակվել է մոդել, որը հնարավորություն կընձեռի հասկանալու, թե Հայաստանի

Հանրապետության համախառն ներքին արդյունքը ինչպիսի կախվածություն ունի Ռուսաստանի Դաշնության ՀՆԱ-ից, և որքան է այդ կախվածության մակարդակը:»: Նախ՝ վիճելի է այն դրույթը, թե արդյո՞ք ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավման համատեքստում հետազոտության հիմնական նպատակը պետք է լիներ և ատենախոսությունում զգալի ծավալ հատկացվեր պարզելու համար, թե ռուս-ուկրաինական հակամարտության ավարտից հետո ինչ իրավիճակում է հայտնվելու Հայաստանի Հանրապետությունը և թե ի՞նչ կլինի այդ դրական շոկի դուրս գալուց որոշ ժամանակ անց, կամ արդյո՞ք տեղին է պնդումը, որ հակամարտության արդյունքում ՀՀ բնակչության կյանքի որակը բարելավվել է: Բացի այդ՝ նշվում է, որ մշակվել է մոդել, որտեղ խնդիր է դրվել բացահայտել, թե ՀՀ համախառն ներքին արդյունքը ինչպիսի կախվածություն ունի Ռուսաստանի Դաշնության ՀՆԱ-ից, կրկին հարց է առաջանում, թե որքանով է տեղին տվյալ կախվածության բացահայտումով ինչ-որ եզրահանգումներ կատարելը, չէ՞ որ ՌԴ ՀՆԱ-ի փոփոխությունը, մեծ հաշվով ոչինչ չի տալու, քանի որ ՀՀ-ից ՌԴ է արտահանվում գլխավորապես պարենամթերք, որը զբաղեցնում է ՌԴ համախառն ներկրման աննշան մասը միայն, հետևաբար տվյալ փոխառնչությունների տնտեսամաթեմատիկական գնահատումը որևէ գիտական արժեք չի տալու սույն ատենախոսության թեմայի շրջանակում: Գտնում ենք, որ նշված լայնամասշտաբ ուսումնասիրությունների և վերլուծությունների փոխարեն նպատակահարմար կլիներ, որպեսզի համակողմանիորեն ուսումնասիրվեին և վերլուծվեին ՀՀ բնակչության կյանքի որակի վրա ազդող երկու տասնյակից ավելի գործոններն առանձին-առանձին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունները բնավ չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը, ինչպես նաև արդյունքների գիտագործնական ու կիրառական նշանակությունը: Մարիամ Մասիսի Հարությունյանի «Բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, և գիտական պատշաճ մակարդակով իրականացված հետազոտություն է:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտատեղեկատվական շտեմարաններում:

Ատենախոսության սեղմագիրը արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, կարևոր դրույթները և արդյունքները:

Այսպիսով, Մարիամ Մասիսի Հարությունյանի «Բնակչության կյանքի որակի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի դեկանի տեղակալ, տ.գ.թ. դոցենտ **Վ. Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Վարդան Սամվելի Ալեքսանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ. դոցենտ **Մ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

09 հուլիսի 2026 թ.